

Միջանկյալ Ձեկույց

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից թիվ 30 ընտրատարածքային ընտրական տեղամասում իրականացված դիտարկումների վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները կայանալու են 2007թ մայիսի 12-ին՝ մեծամասնական և համամասնական կարգով:

ՀՀ Ազգային ժողովն ընտրվում է խառը ընտրական համակարգով:

Ազգային ժողովի պատգամավորներից 90-ը ընտրվում է համամասնական ընտրակարգով, իսկ

41-ը՝ մեծամասնական:

Համամասնական ընտրակարգի դեպքում ողջ Հայաստանի տարածքը կազմավորվում է որպես մեկ ընտրատարածք:

Մեծամասնական կարգով ընտրությունների ժամանակ ամբողջ Հայաստանում ձևավորվել է 41 ընտրատարածքային ընտրական տեղամաս:

ՀՀ ԸՕ 115 հոդվածի համաձայն Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում նախատեսված մանդատները բաշխվում է այն կուսակցությունների շրջանում, ովքեր ստացել են վավեր քվեաթերթիկների առնվազն 5 տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքը՝ վավեր քվեաթերթիկների առնվազն 7 տոկոսը:

Մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է մյուս թեկնածուներից ավել ձայն, թեկուզ մեկ: Եթե քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում մասնակիցների ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

Մեծամասնական կարգով պատգամավորության 41 տեղի համար առաջադրվել է 134 թեկնածու:

Համամասնական ընտրակարգով՝ 24 կուսակցություն և մեկ դաշինք:

Նախորդ ԱԺ-ի ընտրություններից հետո ՀՀ ԸՕ-ի 141 հոդվածներում և հոդվածների կետերում տեղի են ունեցել շուրջ 328 փոփոխություններ:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունները միտված են կանխելու ընտրախախտումները, բացառելու ընտրակեղծիքները: Մասնավորապես ԸՕ-ի նոր փոփոխությամբ պատասխանատվություն է սահմանվել նաև ընտրակաշառք վերցնողների համար:

Քվեարկության պրոցեսում խախտումները նվազագույնի հասցնելու համար պատրաստվել են հատուկ ծրարներ: Ընտրողը իր նախընտրած թեկնածուի օգտին նշում կատարելուց հետ քվեաթերթիկը տեղադրում է ծրարի մեջ, նոր գցում քվեատուփը:

Հատուկ ուշադրություն է դարձվել ընտրողների ցուցակների կազմմանը: ՀՀ ԸՕ 9-րդ հոդվածի փոփոխությամբ ընտրողների ցուցակը կազմում և վարում է քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող ՀՀ ոստիկանության անձնագրային և հրավերների վարչությունը /այսուհետ՝ լիազոր մարմին/:

2007թ. մայիսի 12-ին կայանալիք ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով ԿԸՀ-ի կողմից հավատարմագրվել են 5 միջազգային և 19 տեղական կազմակերպություններ:

ՀՀ ԸՕ 29 հոդվածի համաձայն՝ դիտորդություն իրականացնելու նպատակով դիմումները ԿԸՀ կարող են ներկայացվել մինչև քվեարկության օրը, բայց ոչ ուշ, քան 10 օր առաջ: Այսինքն՝ ԱԺ առաջիկա ընտրություններում դիտորդության համար ԿԸՀ-ը դիմումներ կընդունի մինչև 2007թ մայիսի 2-ը:

Դիտորդների դիտարկման ծավալը ողջ ընտրական պրոցեսն է, ներառյալ ընտրական օրենսդրությունը, նախընտրական քարոզչությունը, քվեարկությունը, քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփումը, ընդհուպ ընտրական վեճերի քննարկումը դատարաններում:

Առաջիկա Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը հանրությանը ներկայացվում է ԿԸՀ-ի էլեկտրոնային էջի միջոցով, ինչպես նաև պարբերաբար ԿԸՀ-ի կողմից կազմակերպվող մամուլի ասուլիսների ժամանակ:

ԿԸՀ-ի էլեկտրոնային էջը տեղեկություն է տրամադրում թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական կարգով առաջադրված կուսակցությունների և թեկնածուների վերաբերյալ, ինչպես նաև ընտրատեղամասերի, ընտրատարածքային հանձնաժողովների, ընտրողների ցուցակների վերաբերյալ:

2007թ ԱԺ-ի ընտրությունների նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից:

Մասնավորապես «Իրավական նախաձեռնությունը ընտրություններ, 2007» հասարակական նախաձեռնությունն ընդգրկում է հանրապետության ողջ տարածքում գործող հասարակական կազմակերպություններին:

Հանրությանն իրազեկելու, քաղաքացիների ընտրական իրավունքի վերաբերյալ հարցերին պատասխանելու նպատակով ապրիլի 1-ից գործում է թե՛ հեռախոսագիծ, որին հանրապետության ցանկացած բնակավայրից ուղղված հեռախոսազանգն անվճար է:

Մեկ այլ ՀՀ Ոստիկանության ենթակայությամբ ձևավորված թե՛ հեռախոսագիծը պատասխանում է ընտրացուցակներում առկա անճշտությունների վերաբերյալ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին:

ՀՀ ԸՕ-ով ԱԺ-ի նախընտրական քարոզչությունը մեկնարկել է 2007թ ապրիլի 8-ից:

Լոռու մարզն ընդգրկում է թիվ 29, 30, 31, 32 ընտրատարածքները:

Թիվ 29 ընտրատարածքում ԱԺ պատգամավորի համար իրենց թեկնածությունն են առաջադրել 2 թեկնածու՝ Վահան Մաղաթյանը և Արկադի Համբարձումյանը:

Վահան Մաղաթյանին առաջադրել և հովանավորում է «Դաշինք» կուսակցությունը: Նա հանդիսանում է «Վահան Մաղաթյան» ՍՊԸ հիմնադիր տնօրենը:

Արկադի Համբարձումյանը անկուսակցական է, սակայն առաջադրվել է Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից: Նա հանդիսանում է «Սլավ», «Դիրժավա» ՓԲԸ-ների նախագահը:

Թիվ 30 ընտրատարածքում առաջադրվել են Վահրամ Բաղդասարյանը, Վիկտոր Դալլաքյանը, Սամսոն Խաչատրյանը, Վահան Մխիթարյանը:

Վահրամ Բաղդասարյանը ԱԺ պատգամավոր է, անկուսակցական, առաջադրվել է քաղաքացիական նախաձեռնությամբ, սակայն վայելու է Հայաստանի Հանրապետական կուսակցության հովանավորությունը:

Վիկտոր Դալլաքյանը ԱԺ պատգամավոր է, անկուսակցական, առաջադրվել է քաղաքացիական նախաձեռնությամբ:

Սամսոն Խաչատրյանը չի աշխատում, հանդիսանում է «Ազատամարտի վետերանների միություն» կուսակցության անդամ, սակայն առաջադրվել է քաղաքացիական նախաձեռնությամբ:

Վահան Մխիթարյանը «Հայանտառ» ՊՓԲԸ գլխավոր տնօրենի խորհրդական է, առաջադրվել է և վայելում է «Դաշինք» կուսակցության հովանավորությունը:

Թիվ 31 ընտրատարածքում առաջադրվել են Կարեն Սարիբեկյանը, Վիկտորիա Հարությունյանը, Կորյուն Ղարաքեչիշյանը, Վահագն Շահինյանը, Լարիսա Փարենուզյանը:

Կարեն Սարիբեկյանը Հայաստանի էլցանցեր ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնճյուղի տնօրենն է, առաջադրվել է և վայելում է Հայաստանի Հանրապետական կուսակցության հովանավորությունը:

Վիկտորիա Հարությունյանը Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոս է: Առաջադրվել է և վայելում է «Օրինաց երկիր» կուսակցության հովանավորությունը:

Կորյուն Ղարաքեչիշյանը չի աշխատում: Առաջադրվել է և վայելում է «Դաշինք» կուսակցության հովանավորությունը:

Լարիսա Փարենուզյանը չի աշխատում: Առաջադրվել է և վայելում է Հայաստանի Ժողովրդական կուսակցության հովանավորությունը:

Թիվ 32 ընտրատարածքում առաջադրվել է 1 թեկնածու՝ Պողոսյան Սուրիկը: Նա ՀՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ է, առաջադրվել է և վայելում է Հայաստանի Հանրապետական կուսակցության հովանավորությունը:

Ստացվում է, որ Լոռու մարզում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածուներից 3-ն անկուսակցական են, 3-ը՝ «Դաշինք» կուսակցությունից, 2-ը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունից, 1-ը՝ Հայաստանի Ժողովրդական կուսակցությունից, 1-ը՝ «Օրինաց երկիր», 1-ը՝ «Ազատամարտի վետերանների միություն» կուսակցությունից:

Մինչ պաշտոնական նախընտրական քարոզչությունը թե՛ կուսակցությունների, թե՛ թեկնածուների կողմից իրականացվել են որոշակի գործողություններ, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետական և Բարգավաճ Հայաստան կուսակցությունները քաղաքի տարբեր հատվածներում փակցրեցին իրենց գովազդային պաստառներն ու գովազդային վահանակները:
- Մարտի 8-ի և ապրիլի 7-ի կապակցությամբ թեկնածուներ Վիկտոր Դալլաքյանը, Վահրամ Բաղդասարյանը, «Օրինաց երկիր», «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները հանդիպումներ կազմակերպեցին քաղաքացիների հետ՝ համերգների, թատրոնների միջոցով: Այդ հանդիպումների ժամանակ թե՛ թեկնածուները, թե՛ կուսակցությունները քաղաքացիներին տարբեր նվերներ են բաժանել՝ թանկարժեք ափսեներ, օժանելիք, ծաղիկներ:

Նախընտրական քարոզչություն

Մեծամասնական կարգով առաջադրված պատգամավորության թեկնածուներ

Պաշտոնական քարոզչության մեկնարկից հետո Վանաձորում սկսեցին աշխատել կուսակցությունների և թեկնածուների գրասենյակներն ու նախընտրական շտաբները:

Պատգամավորության թեկնածուներից առավել ակտիվ քարոզչությամբ աչքի է ընկնում Վահրամ Բաղդասարյանը: Քաղաքում նա ունի մեկ 10-ից ավելի նախընտրական շտաբներ:

Տպագրել է նախնտրական քարոզչության բուկլետ 3000 օրինակից, իր նկարներով օրացույցներ, քաղաքի կենտրոնական փողոցի վրա տեղադրել 3 գովազդային վահանակ:

Քաղաքի տարբեր հաստատություններում հատուկ մշակված հանդիպումների օրակարգի համաձայն՝ քաղաքացիների հետ օրական 4-5 նախընտրական հանդիպում է կազմակերպում:

Քաղաքի դպրոցներում կազմակերպվող հանդիպումներից մի քանիսն իրականացվել են «ծնողական ժողովի» անվան տակ: Հանդիպումների ժամանակ հաճախ նրա օգտին քարոզչությամբ հանդես են գալիս դպրոցի տնօրենները /մասնավորապես թիվ 2, 22 դպրոցներում/:

Վահրամ Բաղդասարյանը հանդիպումների ընթացքում դպրոցներին նախընտրական խոստումներ է տալիս: Ոչ պաշտոնական, տարբեր թաղամասերի քաղաքացիների կողմից տրված տեղեկատվությամբ Վահրամ Բաղդասարյանի նախընտրական շտաբներում քաղաքացիները սոցիալական տարբեր տեսակի խնդիրների լուծման կապակցությամբ դիմումներ են ներկայացնում:

Նույն շտաբներում էլ ձայներ են հավաքում Հայաստանի Հանրապետական կուսակցության օգտին՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց առաջարկելով 5000 դրամ:

Վահրամ Բաղդասարյանի նախընտրական գրեթե բոլոր հանդիպումները լուսաբանվել են «ՎԱԲԱ», «Միգ TV» հեռուստատեսություններով:

Պատգամավորության թեկնածուներից մյուսը՝ Վիկտոր Դալլաքյանը նախընտրական քարոզչությունն սկսել է նախընտրական քարոզչության պաշտոնական հայտարարումից 1 շաբաթ անց: Քաղաքի տարածքում նա ոչ մի նախընտրական շտաբ չունի:

Քաղաքում Վիկտոր Դալլաքյանը քաղաքացիների հետ նախընտրական հանդիպումներ իրականացնում է համաձայն օրակարգի 4-5 հանդիպում:

Քարոզչության ընթացքում երբեմն մրցակիցների և իշխանության դեմ քողարկված հակաքարոզչություն է անում:

Քաղաքի մի քանի դպրոցներ՝ թիվ 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ դպրոցներում նրան մերժել են դահլիճ տրամադրել, իսկ 10-րդ, 11-րդ դպրոցներում նախատեսված նախապես պայմանաավորված հանդիպումները չեն կայացել: Դպրոցները փակ են եղել: Բոլոր դեպքերում էլ դպրոցների տնօրենները պատճառաբանել են, թե աշխատակիցները չեն ցանկանում հանդիպել կամ անհրաժեշտ է Լոռու մարզի կրթության վարչության ղեկավարի թույլտվությունը:

Վիկտոր Դալլաքյանը քաղաքացիներին իր նախընտրական ծրագիրը ներկայացնում է նախընտրական բուկլետի /3000 օրինակ/ և իր հեղինակական գրքույկի միջոցով /գրքույկի տպաքանակը չի նշվում/:

Պատգամավորության թեկնածու Սամսոն Խաչատրյանը նախընտրական քարոզչությունն իրականացնում է իր համախոհների՝ երիտասարդների հետ: Քաղաքում նա ունի 2 նախընտրական շտաբ, որոնց գովազդային վահանակները պատրաստել են սեփական ուժերով: Նախընտրական քարոզչության որևէ բուկլետ կամ գովազդային միջոց չունի: Քաղաքացիների հետ հանդիպումներն իրականացնում է համապատաստից:

Սամսոն Խաչատրյանին ևս, ըստ իր վկայության, քաղաքի մի քանի դպրոցներում նախընտրական հանդիպումներ իրականացնել չեն թույլատրել:

Պատգամավորության մյուս թեկնածուն՝ Վահան Մխիթարյանը նախընտրական քարոզչությունն իրականացնում է «Դաշինք» կուսակցության հետ: Նախընտրական հանդիպումների շտաբների վերաբերյալ նա ՀԲԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցներին չի տրամադրել:

Համամասնական կարգով առաջադրված կուսակցություններ

Վանաձորում գործում են հետևյալ կուսակցությունների նախընտրական շտաբները.

- «Դաշինք» 1 կենտրոնական գրասենյակ և 3 նախընտրական շտաբ
- «Հանրապետություն» 1 կենտրոնական գրասենյակ և նախընտրական շտաբ
- «Ժողովրդական ուղի» 2 նախընտրական շտաբ
- «Ազգային միաբանություն» 1 կենտրոնական գրասենյակ և նախընտրական շտաբ
- Ժողովրդական կուսակցություն մոտ 14 նախընտրական շտաբ
- ՀԺԿ 1 նախընտրական շտաբ
- ՕԵԿ մոտ 10 նախընտրական շտաբ
- ԲՀԿ մոտ 13 նախընտրական շտաբ, 20 ենթաշտաբ
- ՀՀԿ մոտ 6 նախընտրական շտաբ
- ՀՅԴ մոտ 10 նախընտրական շտաբ
- ՄԱԿ մոտ 13 նախընտրական շտաբ
- Հայաստանի Կոմունիստական կուսակցություն 1 կենտրոնական գրասենյակ և նախընտրական շտաբ
- Միավորում հանուն Հայաստանի 1 նախընտրական շտաբ
- Սոցիալ-Դեմոկրատական հնչակյան կուսակցություն 1 նախընտրական շտաբ
- «Ժառանգություն» 2 նախընտրական շտաբ
- ՀՀՇ 1 նախընտրական շտաբ

Համամասնական կարգով առաջադրված կուսակցություններից քաղաքացիների հետ Վանաձորում հանդիպում են ունեցել ԱԺԿ, «Ժառանգություն», «Ազգային միաբանություն», «ՀԺԿ» կուսակցությունները, «Ինչպիսին» դաշինքը:

Համամասնական կարգով առաջադրված կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության սկզբունքի խախտումներ

- ԲՀԿ-ն Գրիգոր Լուսավորչի 39/1 հասցեի բնակիչների համար կազմակերպում է անվճար իրավաբանական խորհրդատվություն /արգելվում ԸՕ-ի 18-րդ հոդված, 7-րդ կետ/:
- ՀՅԴ կուսակցության պաստառները փողոցում բաժանել են անչափահաս երեխաները /արգելվում է ՀՀ «Պովազդի մասին» օրենք, 14-րդ կետ 3-րդ/:

- Բարգավաճ Հայաստան կուսակցության Տարոն 2 հասցեում տեղակայված նախընտրական շտաբից 2 ընտանիքին տալիս են 1 մեծ պարկ այլուր: Շտաբի ղեկավարը յուրաքանչյուր ընտանիքին 5 կգ է տվել, որը տարածայնությունների և վիճաբանության առիթ է դարձել /արգելվում ԸՕ-ի 18-րդ հոդված, 7-րդ կետ/:
- Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները առաջարկում են 5000 դրամ 1 ձայնի դիմաց /արգելվում ԸՕ-ի 18-րդ հոդված, 7-րդ կետ/:
- ՄԱԿ-ի գրասենյակում քաղաքացիների կողմից սոցիալական հարցերի լուծման համար դիմում-խնդրանքներ են հավաքում /արգելվում ԸՕ-ի 18-րդ հոդված, 7-րդ կետ/:
- Գազի գրասենյակի աշխատակիցներին կարգադրել են ստորագրություններ հավաքել ՀՀԿ-ի օգտին: Յուրաքանչյուր աշխատող 10 ստորագրություն և անձնագրի տվյալներ:
- Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը հանդիպել է թիվ 15 մանկապարտեզի ծնողների հետ, հանդիպման ընթացքում խնդրել է ընտրել Հայաստանի Հանրապետական կուսակցությանը /արգելվում է ԸՕ-ի 18-րդ հոդված 4-րդ կետ/:
- Գուգարք պոլիկլինիկայում Լուու մարզպետը հանդիպում է կազմակերպել աշխատակիցների հետ՝ հորդորելով քվեարկել հանրապետական կուսակցության օգտին /արգելվում է ԸՕ-ի 18-րդ հոդված 4-րդ կետ/:
- Բարգավաճ Հայաստան կուսակցության ներկայացուցիչները Տարոն 2 թաղամասի բնակարաններում ինչ-որ ծրարներ են բերել, որտեղ կուսակցության կնիքով փաստաթղթի վրա լրացրել են ընտրանիքի անդամների անձնական տվյալները:
- Հանրապետական կուսակցությունը 3000-5000 դրամ ընտրակաշառք է առաջարկում /արգելվում ԸՕ-ի 18-րդ հոդված, 7-րդ կետ/:
- ՀՀԴ Աղայան փողոցի նախընտրական շտաբներից բնակիչներին 5000 դրամ նախընտրական կաշառք են բաժանում /արգելվում ԸՕ-ի 18-րդ հոդված, 7-րդ կետ/:
- Ոչ պաշտոնական տվյալներով ԲՀԿ-ն յուրաքանչյուր աշխատողի՝ ստորագրությունների հավաքում, վճարում է 15.000 դրամ:
- Ոչ պաշտոնական տվյալներով ՄԱԿ-ը իր նախընտրական շտաբներում աշխատողներին վճարում է 25000 դրամ, որոնք պաշտոնապես գրանցված չեն:
- Հովհ. Աբելյանի անվան թատրոնում հանրապետական կուսակցությունը և ՎՊՄԻ-ի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը հրավիրել են «Կոմիտասի անվան քառյակին»: Համերգից հետո նախընտրական քարոզչությամբ հանդես է եկել Վահրամ Բաղդասարյանը:
- Պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանը «Մխիթար-Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում կայացած հանդիպման ժամանակ արգելել է լրագրողներին մասնակցել/ՁԼՍ մասին օրենք, հոդված 4, 3-րդ կետ, 4-րդ մաս/:

Նախընտրական քարոզչության ընթացքում տպագիր նյութերի միջոցով /նախընտրական բուկլետներ, օրացույց, պաստառ/ քարոզչությամբ աչքի են ընկել

- | | |
|-----------------------|---|
| • «Օրինաց երկիր» | 11 տեսակի բուկլետ, թերթ, պաստառ, օրացույց |
| • ՀՀԴ | 8 տեսակի բուկլետ, թերթ, պաստառ, օրացույց |
| • «Բարգավաճ Հայաստան» | 7 տեսակի բուկլետ, թերթ, պաստառ, օրացույց |
| • «Ժառանգություն» | 6 տեսակի բուկլետ, թերթ, պաստառ, օրացույց |
| • «ՄԱԿ» | 5 տեսակի բուկլետ, թերթ, պաստառ, օրացույց |
| • «ԱԺԿ» | 4 տեսակի բուկլետ, թերթ, պաստառ, օրացույց |

Թեժ հեռախոսագծից ՀՔԱ Վանաձորի գրասենյակից ուղղված քաղաքացիների հեռախոսազանգերն առնչվել են ընտրացուցակներին և դրանցում առկա անճշտությունների վերացմանը, ընտրացուցակներում վերականգնվելու հարցերին:

Քաղաքացիների համար պատրաստվել է ընտրացուցակներում վերականգնվելու դիմում-հայտ: